ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ -
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ԺԷ ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԸ Հայ ազգի մամուլին երիցագոյն ներկայացուցիչն՝ 1919ին կը սկսի նոր շրջան մը։

ԲԱԶՄԱՎԷՊի արդի խմբագրութիւնը՝ յարգելով իւր նախորդաց գործունէութեան ծրագիրը՝ պիտի ճգնի Գիտական, Գեղարուեստական, Բարոյական և Դպրոցական մասնաճիւղերու աւելի այժ տալ։ Հետևաբար պիտի ջանայ, Վարդապետականը՝ Գործնականին, Բանասիրականը՝ Գիտականին, Գեղարուեստականը՝ Մանկավարժականին և Օգտակարը՝ Զուարճալիին հետ հաշտեցնել։

ԲԱԶՄԱՎԷՊը Հայ Ազգիս բարոյական, իմացական, կենցաղական զարգացմանը նպաստելու դիտաւորութեամբ, պիտի բովանդակէ Համազգային Ուսանց և Դիտութեանց և Գեղեցիկ Դպրութեանց այժմէութիւններ՝ ինքնագիր կամ թարգմանածոյ։

ԲԱԶՄԱՎԷՊը որպէս զի ամբողջ Հայ մտքին՝ 1900էն մինչև ցարդ ի լոյս ընծայած կարևոր արտադրութիւններուն և հրատարակութիւններուն տեղեակ ընէ իր ընթերցողները, դարձեալ պիտի աշխատի ԳՐԱԽՕՍԱԿԱՆ բաժնին մէջ՝ խմբագրութեանս նուիրուած ամէն գրքերու և ՀԱՅԵՐԷՆ կամ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ Հայ հեղինակութիւններու կամ Գեղարուեստական արտադրութիւններու վրայ, հակիրճ տեսութիւններ հրատարակել։

ԲԱԶՄԱՎԷՊը 1919ի շրջանին մէջ՝ պիտի ջանայ իր անուան հաւատարիմ մնալով՝ Բազում վեպեր՝ այսինքն գիտութիւններ մատուցանել՝ գրասէր և ընթերցասէր Հայորդւոց և անգամ մը ևս գնահատուիլ իբրև ՀԱՄԱՖՆԱԳԻՏԱՐԱՆ հայկական մտքի։

ԲԱԶՄԱՎԷՊը ամէն ամսուան սկիզբը լոյս պիտի տեսնէ և անմիջապէս պիտի ուղարկուի բաժանորդներու և մեզի հետ պարբերական հրատարակութիւններ փոխանակողներու։ ԲԱԶՄԱՎԷՊի պրակներու առաքման և ընդունելութեան յապաղումները կամ թղթատարութեանց կամ պետական նոր օրէնքներու տրամադրութեանց պէտք է վերագրուին։ Խմբագրութիւնս պիտի շարունակէ բացառիկ գրքոյկներ կամ գրախօսական գրացուցակներ նուէր յղել։

ԲԱԶՄԱՎԷՊի Խմբագրութիւնս և Տպարանիս Վարչութիւնը ընդհանուր սղութեան անտեղիտալի պահանջին հանդէպ, և բազմաթիւ արգելքներու և ծախսերու հրամայական հարկին տակ՝ անգամ չուզեց գինն բարձրացնել այլ յանձն առնելով ամէն զոհողութիւն, կը շարունակէ ամենաչափաւոր պայմաններով Բաժանորդներ արձանագրել յաջորդ տարւոյն համար։

ԲԱԶՄԱՎԷՊի Նոր խմբագրութիւնն կը ծանուցանէ ի վերջոյ իւր յարգելի բաժանորդներուն թէ 1918 Բազմավէպն, որոշուած է մի առանձին հատորով հրատարակել, գլխաւորապէս նուիրուած մեր Ազգի մարտիրոսագրութեան և Հայաստանի անկախութեան։

ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առանձնականներու համար ֆրանք 15,— Տոլար 3,—

Դրավաճառներու և Ազգային դպրոցներու համար առանձին զիջումն կը լինի։

digitised by A.R.A.R.@